

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021)



2021 թ. մայիսի 2-ին կյանքին վաղաժամ հրաժեշտ տվեց ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, մեծատաղանդ պատմաբան, խորագիտակ հայագետ և վրացագետ, աղբյուրագետ ու միջնադարագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայրապետ Գևորգի Մարգարյանը:

Նա ծնվել է 1950 թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ Արարատի մարզի Այգևան գյուղում: Սկզբնական կրթությունը հայրենի գյուղում ստանալուց հետո՝ 1967 թ., ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ, որտեղ Աշոտ Աբրահամյանի և Պարույր Մուրադյանի ղեկավարությամբ մասնագիտացել է աղբյուրագիտության գիտաճյուղում: 1973-1975 թթ. նա ուսանել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ կովկասագիտություն մասնագիտությամբ: Այդ նույն տարիներին նա նպատակային ծրագրով Թբիլիսիի Իվանե Զավախիշվիլու անվան պետական համալսարանի ասպիրանտուրայում կովկասագետ, ակադեմիկոս Ակակի Շանիձեի և վրացագետ Իվանե Իմնաիշվիլու ղեկավարությամբ մասնագիտացել է վրացագիտության, հին վրացական աղբյուրագիտության և պատմագրության, Այսրկովկասի պատմության բնագավառներում:

1975-1996 թթ. Հ. Մարգարյանն աշխատել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Կովկաս և Բյուզանդիա» (ներկայիս՝ «Քրիստոնյա Արևելք») բաժնում, նախ՝ որպես կրտսեր, այնուհետև՝ ավագ և առաջատար գիտաշխատող: 1979 թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հյուսիսային Հայաստանը և Վրաստանը ԺԲ դարի 20-70-ական թթ.» թեմայով, իսկ 1996 թ.՝ դոկտորական ատենախոսություն «Ռազմաքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և հայ ավատատիրական ավագանին (ԺԲ դարում և ԺԴ դարի առաջին կեսում)» թեմայով: Ի դեպ, այս ատենախոսություններից առաջինը հրատարակվել է իբրև մենագրություն («Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր», Երևան, 1980), իսկ երկրորդը ցայսօր մնացել է անտիպ:

Հ. Մարգարյանը 1982 թ. սկսել է դասախոսել Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում, իսկ 1996 թ.՝ մշտական աշխատանքի է անցել ԵՊՀ հայոց պատմության ամբիոնում: Մեր հանրապետության տարբեր բուհերում նա դասավանդել է հայոց պատմություն, աղբյուրագիտություն, կովկասագիտություն: Լինելով շնորհաշատ պատմաբան՝ նա փայլում էր նաև իր դասախոսական ձիրքով և ունակություններով, քանզի նրա դասախոսություններն ուշագրավ էին ու հետաքրքրաշարժ, հյութեղ ու համոզիչ խոսքն առինքնող էր և գրավիչ, իսկ բարյացակամ խստապահանջությունը՝ տպավորիչ և ուսուցողական: 1989 թ. նա ստացել է դոցենտի, իսկ 2003 թ.՝ պրոֆեսորի կոչումներ:

2007 թ. Հ. Մարգարյանն ընտրվել է ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ՝ դրսևորելով գիտական և ուսումնակրթական գործի բազմահմուտ կազմակերպչի, կոլեկտիվի անգուգական և անաչառ ղեկավարի անվիճելի ունակություններ: Թե՛ գիտության և թե՛ ուսումնակրթական ասպարեզներում նա նորարար էր բառի բուն իմաստով, արագորեն, բայց քննական լույսի ներքո արձագանքում էր ընթացող վերափոխություններին, որոնցով պայմանավորված էին ամբիոնի ձեռքբերումները: Նրա ղեկավարությամբ մեկ տասնյակից ավելի ատենախոսություններ պաշտպանած հեղինակները մասնագիտացել են կովկասագիտության զանազան հիմնախնդիրներում:

Հայաստանում վրացագիտության զարգացման ասպարեզում նոր ուղենիշ դարձան Հ. Մարգարյանի գիտական հետազոտությունները, որոնք նոր դարագլուխ բացեցին հայ-վրացական քաղաքական փոխհարաբերությունների հետազոտության բնագավառում: Հայագիտությունը և վրացագիտությունը նրան են պարտական միջնադարյան Այսրկովկասի ԺԲ դարի պատմության բազմաթիվ խրթին խնդիրների վերլուծության և բազմակողմանի քննարկման համար: Նրա դոկտորական ատենախոսությունը նոր մայրուղիներ բացեց զարգացած ավատատիրության դարաշրջանում Առաջավոր Ասիայի պատմության բազմաթիվ խնդիրների հետազոտության բնագավառում:

Նրա ուշադրությունից դուրս չէին նաև միջնադարյան Հայաստանի և Վրաստանի մատենագրությունն ու վիմագրությունը, էթնոագգային ինքնության, եկեղեցական և սոցիալական կյանքի խնդիրները: Մեծ հետաքրքրություն և գիտական արժեք են ներկայացնում նրա «Զաքարյանների ծագման ավանդությունը» հոդվածաշարը («Պատմաբանասիրական հանդես», 1992, 1994), ինչպես նաև Վաչուտյանների, Պոռոշյանների, Օրբելյանների, Մահկանաբերդցիների իշխանական տների պատմությանը նվիրված հոդվածները: Լեզուների և պատմագրության նյութի խորն իմացությունը նրան թույլ է տվել գիտության բնագավառում կատարել բազմաթիվ կռահումներ և սկզբնաղբյուրներով ապացուցել Հայաստանի և Կովկասի պատմության բազմաթիվ բաց խնդիրներ:

2. Մարգարյանը մեծ ավանդ ուներ նաև հայ և վրաց միջնադարյան սկզբնաղբյուրների հետազոտության ասպարեզում: Իր բացահայտումներով և վերլուծություններով նա նոր մոտեցումներ է ցուցաբերել Մովսես Խորենացու, Մեբեոսի, Հովհաննես Դրասխանակերտցու, Մամուլեի և Մխիթար Անեցու, ինչպես նաև Քարթլիս Ցխովրեբայի բնագրերի բազմաթիվ դրվագների նկատմամբ, նորովի անդրադարձել միջնադարյան վանական Սահմանքներին և Շուշանիկի վկայաբանությանը: Նա իր կարողություններն էլ ցույց է դրել նաև հայկական միջնադարյան վիմական սկզբնաղբյուրների վերլուծության և հրատարակության բնագավառում:

2. Մարգարյանն Արևելագիտության ինստիտուտում հրատարակվող «Кавказ и Византия» միջազգային ճանաչում ունեցող բազմահատոր ժողովածուի հիմնադիրներից էր: Նա առաջիններից էր, որ նախաձեռնեց վրացերենի ուսուցումը Հայաստանում, ԵՊՀ-ում գործող նրա իսկ ղեկավարած ամբիոնի ուսումնական առարկաների թվում ընդգրկվեց վրաց լեզուն: Նա և Պավել Չոբանյանը վրացերենից հայերեն են թարգմանել Ա. Շանիձեի «Հին վրացերենի քերականություն» աշխատությունը (Երևան, 1983):

Նա իր անուրանալի ներդրումն ունեցավ հայագիտության և կովկասագիտության զարգացման ակադեմիական բնագավառներում, քանզի Արևելագիտության ինստիտուտի «Հայաստանի հարակից երկրների պատմություն» երկհատորյակի (Երևան, 2016) և Պատմության ինստիտուտի «Հայոց պատմություն» բազմահատորյակի, ինչպես նաև ԵՊՀ-ի «Հայոց պատմության հիմնահարցեր»-ի (Երևան, 2000) համահեղինակներից էր: Նա նաև ծանրակշիռ ներդրում ուներ Հայաստանի Հանրապետության դպրոցական և բուհական նոր դասագրքերի ստեղծման գործում, «Հայոց պատմություն» 5-րդ և 6-րդ դասարանների գործող դասագրքերի (Երևան, 1992) համահեղինակներից էր:

2. Մարգարյանի հանրագիտարանային գիտելիքները, նյութը խորաթափանցորեն վերլուծելու ինքնատիպ կարողունակությունն ու նուրբ դիտողականությունն ուղղակի դրոշմված էին նրա դասախոսությունների և զեկուցումների վրա, որոնցով նա պարբերաբար հանդես է եկել ոչ միայն հայկական, այլև Փարիզի, Լոս Անջելեսի, Վաստիկանի, Վենետիկի, Բուդապեշտի և Արցախի համալսարանների ու գիտական հիմնարկների կազմակերպած բազմաթիվ գիտաժողովներում: Այդ նույն երկրների գիտական հանդեսներում հայերեն, վրացերեն, ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն հրատարակած նրա բազմաթիվ հոդվածները սլացիկ մտքի արգասիքներ են:

Նա առանձնանում էր գիտական բանավեճի բարձր կուլտուրայով: Անհատական գիտելիքների վրա խարսխված՝ գիտական բանավեճի «մարգարյանական» ըմբռնումը, հումորի նուրբ զգացողությունն ու մտքի սրությունը նրա վարած բանավեճերի և զրույցների մշտական ուղեկիցներից էին: Ի դեպ, նրա գիտական վաստակը բարձր են գնահատել ոչ միայն հայրենական գիտության նրա գործընկերները, այլև արտասահմանյան տարբեր ճանաչված պատմաբաններ Ժերար Դեդեյանը, Կլոդ Մութաֆյանը, Վալենտին

Կայցուլարին, Իգաբել Օժեն, Բեռնար Ուտինեն, Ջագա Ալեքսիձեն և այլք:

Հ. Մարգարյանը բարեկամական սերտ համագործակցություն էր հաստատել Հայոց եկեղեցու Թբիլիսիում հաստատված թեմի հետ: Վրաստանի ճարտարապետության և պատմության վիճարկելի մի շարք հարցերի պարզաբանումն ու հստակեցումը տեղի են ունեցել հիշյալ թեմին նրա տրամադրած բազմաթիվ արժեքավոր նյութերի և խորհրդատվությունների հիման վրա:

Հ. Մարգարյանը մեծապես նպաստեց ԵՊՀ «Հայագիտության հարցեր» հանդեսի հրատարակությանը գիտական բարձր մակարդակով, որի խմբագրական խորհրդի անդամներից էր ի սկզբանե: Նա պարբերաբար ընթերցում էր հայ ժողովրդի միջնադարյան պատմությանը նվիրված հոդվածների նախնական տարբերակները և հայտնում օրյեկտիվ կարծիքներ: Տասնամյակներ շարունակ նա Պատմության ինստիտուտում գործող՝ գիտական աստիճաններ շնորհող Բարձրագույն որակավորման կոմիտեի մասնագիտական խորհրդի անդամն էր:

Գիտամանկավարժական բեղուն գործունեության համար Հ. Մարգարյանը պարգևատրվել է բազմաթիվ պատվոգրերով, ԵՊՀ ոսկե, իսկ 1986 թ.՝ «Աշխատանքային արիության համար» մեդալներով:

Հ. Մարգարյանը օժտված էր մարդկային բարձր առաքինություններով, ազնիվ էր, շատ համեստ, շիտակ, արդարամիտ, անաչառ ու սկզբունքային: Նա խոր և լուսավոր հետազոծ թողեց արդի հայագիտության և կովկասագիտության ասպարեզներում: Մեծ պատմաբանի և դասախոսի բարի ու անմար հիշատակը միշտ վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում:

*Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ
Պատմության ֆակուլտետ*